



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման տեսլականը փաստացի իրողության վերածուել է ետք, հայութիւնը առաջին անգամ ըլլալով Հայաստանի մէջ թէ սփիւռքի, կը գտնուի շատ լուրջ ու ծանրակշիռ կացութեան մէջ, որուն նկատմամբ անտարբեր չի կրնար մնալ պատասխանատուութեան տէր ու գիտակից ոեւէ Հայորդի:

Պարզ է որ Հարցը կը վերաբերի Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու հաստատման գործընթացին, որ իր ձեւով ու խորքով հեռու է հայութեան ազգային շահերը ապահովելէ ու Հայաստանի անվտանգութեան նպաստելէ:

Մենք՝ հայկական քաղաքական երեք կուսակցութիւններս, առաջին ջատագովն ենք, որ բարի դրացիական յարաբերութիւնները հաստատուին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ առանց նախապայմաններու ու երկու երկիրներուն միջեւ բացուին սահմանները, որոնց փակման գծով ոչ մէկ դերակատարութիւն ունեցած է Հայաստանը, սակայն Ջուիցերիոյ միջնորդութեամբ ստեղծուած երկու երկիրներու միջեւ գոյացած արձանագրութիւններէն, երբ կը նկատենք թէ կը բացակայի այդ մէկը, հետեւաբար մերձեցման այս փորձը մեզի համար կը դառնայ անընդունելի ու վնասակար, որովհետեւ.-

1-Հայ Դատի մեր պայքարը այսքան դրական ճանապարհ կտրելէ եւ մեծ ճանաչում ստանալէ ետք կը փորձուի այլազան յանձնախումբերով քննուելու եւ անմիտ քայլերու դիմելով նսեմացնել ու յետաձգել անոր օրինական հաստատումը քաղաքակիրթ մարդկութեան կողմէն որպէս ցեղասպանութիւն:

2-Այս մէկը կը փորձուի կատարել անփոյթ ու անպատասխանատու մօտեցումով եւ առանց նկատի առնելու ապագայ սերունդներու ազգային իրաւունքները, բան մը՝ որ ոչ ոքի թոյլատրելի է:

3-Ներկայ սահմաններու փոխադարձ ճանաչումով, փաստօրէն պարտուողական քաղաքականութիւն կը կատարուի, հրաժարելով հողային մեր իրաւունքներէն:

Առ այդ մենք՝ քաղաքական երեք կուսակցութիւններս կը նկատենք թէ Հայրենիքէն ներս մեր պետութեան արտաքին քաղաքականութիւնը շեղած է իր ազգային

ակունքներէն եւ աւելին՝ հայրենիքի կեանքէն ներս առողջ տարրերը ազգային շահերէ առաջնորդուած վնասակար կը գտնեն այս արկածախնդրութիւնը ու միաժամանակ թուրքիոյ քաղաքական մտաւորական շրջանակը մեծ գոհունակութիւն կը ցուցաբերէ յոխորտալով թէ սահմաններու բացումը կրնայ կատարուիլ միայն ներկայ սահմաններու ճանաչումով ու Լեռնային Ղարաբաղին Ատրպէյճանին վերադարձուելով:

Ի տես այս իրողութիւններուն, մենք՝ Սոցիալ Դեմոկրատ Չնչակեան Կուսակցութիւնը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կոչ կ'ուղղենք Աւստրալիոյ Հայութեան, որ տէր կանգնին իրենց ազգային իրաւունքներուն, դատապարտեն ցարդ կատարուածը եւ ամէն միջոցներով ճնշում բանեցնեն Հայաստանի ներկայ կառավարութեան վրայ որ ետ դարձ կատարէ այս ձախող ու ազգավնաս քաղաքականութենէն եւ ազգային քաղաքականութեան որդեգրումով ծառայէ համայն Հայութեան շահերուն:

Սոցիալ Դեմոկրատ Չնչակեան Կուսակցութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն

Ռամկավար Ազատական Կուսակցութիւն

Սիտնի 17 Սեպտեմբեր